

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2021

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

**1** Հետևյալ օրգանիզմներից ո՞րն ավտոտրոֆ չէ.

- 1) անաբենան
- 2) նոստոկը
- 3) մուկորը
- 4) օսջիլատորիան

**2** Թվարկված կենդանիներից որի՞ն է քնորոշ մարմնի առաջնային խոռոչը.

- 1) սպիտակ պլանարիային
- 2) եղան երիզորդին
- 3) մարդու ասկարիդին
- 4) լյարդի ծծանին

**3** Ձկան զլխուղեղի ո՞ր բաժնից են դուրս գալիս տեսողական նյարդերը.

- 1) երկարավուն ուղեղից
- 2) առջևի ուղեղից
- 3) ուղեղիկից
- 4) միջակա ուղեղից

**4** Բազմացման ի՞նչ օրգաններ ունի պլանարիան.

- 1) երկու ձվարաններ և բազմաթիվ սերմնարաններ
- 2) երկու ձվարաններ և մեկ սերմնարան
- 3) մեկ ձվարան և երկու սերմնարաններ
- 4) երկու սերմնարաններ և բազմաթիվ ձվարաններ

**5** Ինչպես են հեռացվում սննդի շմարսված մասերը հիդրայի մարմնից.

- 1) հետանցքով
- 2) մարմնի ամբողջ մակերևույթով
- 3) մալախիզյան անոթներով
- 4) բերանային անցքով

**6** Ինչի՞ առկայությունն է քնորոշ ճարպիկ մողեսին՝ ի տարբերություն զորտի.

- 1) կոյանոցի
- 2) թոքի
- 3) կրծքավանդակի
- 4) եռախորշ սրտի

**7**

Մարդու օրգանիզմի ո՞ր կառուցվածքային տարրը կազմված չէ էպիթելային հյուսվածքից.

- 1) թոքաբշտի պատ
- 2) ջիլ
- 3) մազ
- 4) բարակ աղիի թափիկի պատ

**8**

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում պարասիմպաթիկ նյարդային համակարգի դրդման դեպքում.

- 1) լեղու արտադրության ակտիվացում
- 2) անոթազարկի հաճախացում
- 3) բբի լայնացում
- 4) արյան ճնշման բարձրացում

**9**

Ո՞ր ուլորներն են կազմում մարդու կրծքավանդակի կմախքը.

- 1) կրծքային ողերը, 10 զույգ կողոսկրերը, անրակները և թիակները
- 2) կրծքային ողերը, 10 զույգ կողոսկրերը, կրծոսկրը, թիակները
- 3) կրծքային ողերը, 12 զույգ կողոսկրերը, կրծոսկրը
- 4) կողոսկրերը, կրծոսկրը, անրակները և թիակները

**10**

Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում քրտնագեղձերը.

- 1) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 2) ենթամաշկային բջջանքում և վերնամաշկում
- 3) բուն մաշկում
- 4) էպիլեմիսի մակերեսային շերտում

**11**

Մարդու երիկամների զարկերակներով որքա՞ն արյուն է անցնում մեկ օրվա ընթացքում.

- 1) 1,5-2 լ
- 2) 150-170 լ
- 3) 1500-1700 լ
- 4) 2500-2700 լ

**12**

Մարդու սրտի ո՞ր բաժիններն են մասնակցում արյան շրջանառության փոքր շրջանին.

- 1) աջ փորոքը և ձախ նախասիրտը
- 2) աջ նախասիրտը և ձախ նախասիրտը
- 3) ձախ նախասիրտը և ձախ փորոքը
- 4) աջ նախասիրտը և աջ փորոքը

**13**

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում A վիտամինի անբավարարության դեպքում.

- 1) զարգանում է ցինգա հիվանդությունը
- 2) խթանվում է ոռղովասինի սինթեզը, զարգանում է չարորակ սակավարյունություն
- 3) խանգարվում է կալցիումի և ֆոսֆորի փոխանակությունը
- 4) զարգանում են մաշկի կամ լորձաթաղանթների խոցեր

**14**

Ի՞նչ հակածիններ կան երկրորդ խմբի արյուն ունեցող մարդկանց էրիթրոցիտներում.

- 1) B ազյուտինոգեններ
- 2) α ազյուտինիններ
- 3) β ազյուտինիններ
- 4) A ազյուտինոգեններ

**15**

Ի՞նչ է մարդու քոքերի կենսական տարրողությունը.

- 1) հանգիստ ներշնչումից հետո խորը արտաշնչումով հեռացվող օդի ծավալն է
- 2) հանգիստ ներշնչումից հետո հանգիստ արտաշնչած օդի ծավալն է
- 3) օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո
- 4) այն օդի ծավալն է, որը մնում է քոքերում ամենախորը արտաշնչումից հետո

**16**

Թվարկված օրգաններից ո՞րը չի պատկանում մարդու մարտողական համակարգին.

- 1) ենթաստամոքսային գեղձը
- 2) ըմպանը
- 3) կոկորդը
- 4) կերակրավողը

**17** Հետևյալ ածխաջրերից ո՞րը պոլիմեր չէ.

- 1) դեղօքսինիբոզը
- 2) հեպարինը
- 3) գլիկոզենը
- 4) խիտինը

**18** Որտե՞ղ են առաջանում լիզոսոմները.

- 1) Գոլցիի ապարատում
- 2) բջջային կենտրոնում
- 3) բջջակորիզում
- 4) ցենտրիուլերում

**19** Թիլակոիդները.

- 1) կուտակվելով մեկը մյուսի վրա ձևավորում են կատարներ՝ կրիստաներ
- 2) քլորոպլաստի արտաքին թաղանթի առաջացրած թիթեղիկներն են
- 3) միտոքոնորիումի ներքին թաղանթի առաջացրած ծալքերն են
- 4) քլորոպլաստի ներքին թաղանթի առաջացրած թիթեղիկներն են

**20** Նշված օրգանիզմներից նախակորիզավոր քահաներում առկա են.

- 1) Գոլցիի ապարատը և լիզոսոմները
- 2) միտոքոնորիումները
- 3) էնդոպլազմային ցանցը
- 4) ոիբոսոմները

**21** Նշվածներից ո՞րն է ողորկ էնդոպլազմային ցանցի հիմնական ֆունկցիան.

- 1) նուկլեինաթրուների և ածխաջրերի սինթեզը
- 2) սպիտակուցների և վիտամինների սինթեզը
- 3) լիպիդների և ածխաջրերի սինթեզը
- 4) սպիտակուցների և լիպիդների սինթեզը

**22** Մարդու ո՞ր հիվանդության հարուցիչն է պատկանում պրոկարիոտներին.

- 1) Էնցեֆալիտի
- 2) խոզուկի
- 3) կարմրախտի
- 4) խոլերայի

**23**

Նշվածներից ո՞րը կորիզի կազմության մեջ չի մտնում.

- 1) կորիզահյութը
- 2) կորիզաքաղանքը
- 3) կորիզակը
- 4) բջջային կենտրոնը

**24**

Ի՞նչ բջիջ է հեռանում ձվարանից ձվազատման արդյունքում.

- 1) ձվաբջիջ
- 2) օվոգոնիում
- 3) առաջին կարգի օվոցիս
- 4) երկրորդ կարգի օվոցիս

**25**

Նշվածներից ո՞րն է զարգանում սերմնարանի պատից ծաղկավոր բույսերի կրկնակի բեղմնավորման արդյունքում.

- 1) սերմնամաշկը
- 2) սերմը
- 3) էնդոսպերմը
- 4) պտղապատը

**26**

Ինչե՞րն են ձևավորվում էնտոդերմից.

- 1) մարսողական գեղձերը և թոքերի էպիթելիք
- 2) լյարդը և նյարդերը
- 3) մազերը և ոսկորները
- 4) մկանները և սեռական գեղձերը

**27**

Ինչպե՞ս է կոչվում անհատական զարգացման ընթացքում օրգանիզմի նոր հատկանիշներ ձեռք բերելու հատկությունը.

- 1) փոփոխականություն
- 2) գենոտիպ
- 3) ֆենոտիպ
- 4) ժառանգականություն

**28**

Քանի՞ գենոտիպային խմբեր են ստացվում երկիետերողիզուտ առանձնյակի և հոմոզիզուտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) չորս
- 2) մեկ
- 3) երկու
- 4) երեք

**29**

Ինչպիսի՞ գենոտիպեր են ունեցել ծնողները, եթե այդ լնտանիքում բոլոր տղա երեխաները դալտոնիկ են, իսկ աղջիկները՝ դալտոնիզմի գենը կրողներ են.

- 1)  $X^d X^d$  և  $X^D Y$
- 2)  $X^D X^d$  և  $X^d Y$
- 3)  $X^D X^d$  և  $X^D Y$
- 4)  $X^D X^D$  և  $X^D Y$

**30**

Ի՞նչ է էպիստազը.

- 1) ալելային մեկ զույգի կողմից մեկ այլ ալելային զույգի գործունեության ճնշման երևույթը
- 2) կորոմինանտության դրսերման ձև
- 3) ոչ լրիվ դոմինանտության դրսերման ձև
- 4) գերդոմինանտության դրսերման ձև

**31**

Մարդու ո՞ր իիվանդության պատճառն է առտոսումներում գտնվող մուտանտ դոմինանտ գենը.

- 1) Քլայնֆելտերի սինդրոմի
- 2) ալֆինիզմի
- 3) Մարֆանի սինդրոմի
- 4) ֆենիլկետոնուրիայի

**32**

Փոփոխականության ո՞ր ձևն է պայմանավորում Կովկասում և Սիբիրում ապրող սկյուռների արտաքին տարբերությունները.

- 1) ոչ աղապտիվ
- 2) տարիքային
- 3) մուտացիոն և տարիքային
- 4) աշխարհագրական

**33**

Ինչպիսի՞ն կարող են լինել տեսակներն ըստ կենսաքիմիական չափանիշի:

- 1) կոսմոպոլիտ
- 2) կրկնորդ
- 3) երկվորյակ
- 4) էնդեմիկ

**34**

Ինչպե՞ս են կոչվում որոշ առանձնյակների՝ նախնիների հատկանիշներին վերադառնալու դեպքերը.

- 1) ատավիզմներ
- 2) ռուղիմնենտներ
- 3) անալոգ օրգաններ
- 4) հոմոլոգ օրգաններ

**35**

Նշված էկոլոգիական գործոններից ո՞րն է բիոտիկ.

- 1) մթնոլորտի աղտոտումը հրաբխային արտանետումներով
- 2) մթնոլորտային ճնշումը
- 3) ռադիոակտիվ ճառագայթման բնական ֆոնը
- 4) միջտեսակային մրցակցությունը

**36**

Ո՞ր բակտերիաներն են օգտագործում ազոտային թթուն ազոտականի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան.

- 1) դենիտրիֆիկացնող
- 2) ազոտ ֆիքսող
- 3) նիտրիֆիկացնող
- 4) ամոնիֆիկացնող

**37**

Խոշոր եղջերավոր անասունների ոտքի կարճությունը պայմանավորող գենը դոմինանտում է ոտքի նորմալ երկարությունը որոշող գենի նկատմամբ: Միևնույն ժամանակ, երբ այդ ձևը հոմոզիգոտ դոմինանտ վիճակում է, հորքերը ծնվում են մահացած: Տնտեսությունում պահպում է 900 հորք, որոնք ստացվել են ներցեղատեսակային կարճառու առանձնյակների խաչասերումից: Դրանցից քանի՞սն ունի ոտքի նորմալ երկարություն:

- 1) 450
- 2) 225
- 3) 300
- 4) 600

(38-39) Սրտի բոլորաշրջանը տևում է 0.8 վրկ: Մարդու սրտի փորոքները երկու ժամում արյան շրջանառություն են մղել 1080 լ արյուն:

**38**

Սեկ կծկման ժամանակ քանի՞ մլ արյուն է մղում շրջանառություն փորոքներից յուրաքանչյուրը.

- 1) 70
- 2) 45
- 3) 60
- 4) 120

**39**

Զանի՞ բուպե է կազմում նախասրտերի բուլացման ժամանակամիջոցը.

- 1) 52,5
- 2) 75
- 3) 105
- 4) 210

**40**

Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ  $144 \text{ մոլ CO}_2 + 1068 \text{ մոլ H}_2\text{O}$ : 1 մոլ գլյուկոզից մինչև կարնաթրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱՎՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա: Զանի՞ կՋոուլ է կազմում էներգիայի կորուստը անքաղացին փուլում.

- 1) 5040
- 2) 840
- 3) 3360
- 4) 4200

**41**

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ մասում) բույսերի ո՞ր դասին (նշված է աջ մասում) է առավել բնորոշ: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

### Հատկանիշ

- A. պաշարանյութերը էնդոսպերմում են
- B. սերմնամաշկը հեշտ է անջատվում
- C. փնջաձև արմատային համակարգ
- D. ծաղկի անդամների թիվը երեքի բազմապատիկն է
- E. աղեղնաջիղ տերևներ
- F. առանցքային արմատային համակարգ
- G. ցողունում կամքիումի շերտ
- H. ներկայացուցիչներից են՝ թեղին, եզան լեզուն,  
մորին, գորտնուկը

### Դաս

1. միաշաքիլավորներ
2. երկշաքիլավորներ

**42**

Մարդու գլխուղեղի ո՞ր բաժինը (նշված է աջ սյունակում) ո՞ր գործառույթն է (նշված է ձախ սյունակում) իրականացնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

### Գործառույթ

- A. կարգավորում է սրտի կծկումների հաճախականությունը
- B. ապահովում է կմախրային մկանների լարվածությունը
- C. կարգավորում է դեմքի մկանների աշխատանքը
- D. ապահովում է գլխի շրջադարձը դեպի ձայնի աղբյուրը
- E. կենտրոններն ապահովում են տեսողության և լսողության հստակությունը
- F. կարգավորում է կլլման գործընթացը

### Գլխուղեղի բաժին

1. միջին ուղեղ
2. կամուրջ
3. երկարավուն ուղեղ

**43**

Ո՞ր գործառույթը կամ գործառույթի խանգարումը (նշված է ձախ սյունակում) մարդու ո՞ր գեղձին է (նշված է աջ սյունակում) անմիջականորեն համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Գործառույթ կամ գործառույթի  
խանգարում**

**Գեղձ**

- |   |   |
|---|---|
| <p>A. արտադրում է աղբենալին</p> <p>B. ապահովում է մտավոր ունակությունների բնականոն զարգացումը</p> <p>C. աղաջրային փոխանակության կարգավորում</p> <p>D. արտադրում է գլյուկագոն</p> <p>E. արտադրում է թիրօքսին</p> <p>F. բորբքային գործընթացների զարգացման խոչընդոտում</p> <p>G. արյան ճնշման բարձրացում, բրոնխների լուսածերպի լայնացում</p> | <p>1. վահանագեղձ</p> <p>2. մակերիկամ</p> <p>3. ենթաստամոքսային գեղձ</p> |
|---|---|

**44**

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի փոխարարերությունների ձևերի բնութագրերի (նշված է ձախ սյունակում) և սիմքիոզի տարրեր տեսակների (նշված է աջ սյունակում) միջև: Նշել ճիշտ համապատասխանությունը.

**Բնութագրի**

**Սիմքիոզի տեսակ**

- |  |  |
|--|--|
| <p>A. լոցման ձկները ստանում են սննդի մնացորդներ այն կենդանիներից, որոնց ուղեկցում են և միաժամանակ պաշտպանվում զիշատիչներից</p> <p>B. փոխազդող տեսակներից միայն մեկն է ստանում օգուտ, իսկ մյուսն այդ փոխազդեցության հանդեպ անտարրեր է</p> <p>C. փոխազդող տեսակներից մեկը օգտագործում է մյուս տեսակի օրգանիզմը, որպես գոյության միջավայր և սննդի աղբյուր</p> <p>D. էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառաբույսերը որպես հենարան</p> <p>E. փոխազդող տեսակներից մեկը բնակվում է բույսերի վեգետատիվ օրգաններում՝ առաջ բերելով տարրեր հիվանդություններ</p> <p>F. փոխազդող տեսակները ստանում են օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ</p> <p>G. խեցգետինը բնակվում է փափկամարմնի դատարկ խեցու մեջ և իր հետ տանում է ակտինիային</p> | <p>1. կոմենսալիզմ</p> <p>2. մակարուծություն</p> <p>3. կոռպերացիա</p> |
|--|--|

**45**

Ի՞նչ համապատասխանություն կա տարբեր կենդանիների (նշված են ձախ սյունակում) և դրանց հետսաղմնային զարգացման ձևերի (նշված են աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

**Կենդանիներ**

- A. մողես
- B. տգրուկ
- C. աղոթարար
- D. ծղրիդ
- E. մեղու
- F. մոծակ
- G. սարդ
- H. աղավնի

**Հետսաղմնային զարգացման ձևեր**

1. ուղղակի զարգացում
2. քերի կերպարանափոխությամբ զարգացում
3. լրիվ կերպարանափոխությամբ զարգացում

**46**

Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում սնունդը քոչունի մարտողական համակարգի նշված բաժիններով: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բարակ աղիներ
2. ստամոքսի գեղձային բաժին
3. կտնառք
4. ուղիղ աղի
5. կերակրափող
6. կոյանոց
7. քերան
8. ստամոքսի մկանային բաժին

**47**

Ինչպիսի՞ն է համի զգացողության ձևավորման գործընթացների հաջորդականությունը մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քիմրնկալիչների դրդում
2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
3. թքազատության ուժեղացում
4. համի զգայության ձևավորում
5. կենտրոնաձիգ նյարդերով նյարդային ազդակների հաղորդում երկարավուն ուղեղ
6. սննդի բաղադրիչների լուծում թքում
7. բերանի խոռոչի մեխանընկալիչների գրգռում չոր սնունդի հետ շփվելիս

**48**

Ինչպիսի՞ն է մարդու արյունատար համակարգի անոթների ճյուղավորման հաջորդականությունը մարդու արտազատության համակարգում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մազանոթների միացում
2. առերող զարկերակի ճյուղավորում մազանոթների
3. փոքր լուսանցքով երակի առաջացում
4. արտատար զարկերակի ճյուղավորում մազանոթների
5. մանր զարկերակների առաջացում
6. երիկամային զարկերակի ճյուղավորում
7. երիկամային երակի առաջացում

**49**

Մարդու օրգանիզմում ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը Ի.Պ. Պավլովի փորձներում, որոնց արդյունքում ձևավորվում է պայմանական ռեֆլեքսը:  
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. անտարբեր գրգռիչի և ոչ պայմանական ռեֆլեքսի կեղևային կենտրոնների միջև ժամանակավոր կապի առաջացում
2. բերանի խոռոչի լորձաբաղնիքի ընկալիչների գրգռում
3. ժամանակավոր կապի միջոցով պայմանական գրգռիչի ներգործությամբ ոչ պայմանական ռեֆլեքսի կենտրոնի գրգռում
4. թքարտադրություն
5. անտարբեր գրգռիչի և ոչ պայմանական ռեֆլեքսի գրգռիչի գուգակցման կրկնություն
6. անտարբեր գրգռիչի ներգործություն
7. ոչ պայմանական ռեֆլեքսի կենտրոնի գրգռում

**50**

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում մարդու օրգանիզմում մարտղության գործընթացները՝ սկած բերանի խոռոչում սնունդի հայտնվելու պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մոնոմերների, ճարպաթրուների և գլիցերինի ներծծում
2. սպիտակուցների ճեղքում մինչև ամինաթրուներ, ճարպերի ճեղքում մինչև գլիցերին և ճարպաթրուներ
3. բարդ ածխաջրերի նախնական ճեղքում համեմատաբար պարզ ածխաջրերի մարտղական հյութի կարճատև ներգործության ընթացքում
4. սպիտակուցների սինթեզ բջիջներում
5. ենթաստանորսահյութի և լեղու ներգործություն
6. թքազատում
7. սպիտակուցների ճեղքում թթվային միջավայրում

**51**

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում պրոցեսները մեյզով քաժանման ժամանակ: Նշել ճիշտ հերթականությունը.

1. տեղի է ունենում կարճատև պրոֆազ
2. քրոմատիդները տարամիտվում են քջի հակառակ քևեռներ
3. առաջանում են երկու հապլոիդ քջիցներ
4. տեղի է ունենում ցիտոլինեզ և առաջանում են հապլոիդ հավաքակազմով չորս քջիցներ
5. խիազմների հատվածներում իրար կպած հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են քաժանման իլիկի հասարակածային հարթության վրա իրար դեմ դիմաց
6. կրկնակի քրոմատիդներից կազմված քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային հարթության վրա և ամրանում են իլիկի թելիկներին
7. քրոմոսոմները պարուրվում են, հոմոլոգ քրոմոսոմները ամբողջ երկարությամբ հպվում են իրար
8. քրոմոսոմները շարժվում են քջի հակառակ քևեռներ

**52**

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Ախտրոգենազմների միջոցով բակտերիաներում իրականանում է մթնոլորտային ազոտի վերածումը ամոնիակի
2. Կետանմանների և թիառտների վերջույթների նմանությունը կոնվերգենցիայի արդյունք է
3. Լայունացնող ընտրության դեպքում պոպուլյացիայի գենոֆոնը չի փոփոխվում
4. Միմիկրիայի դեպքում քիչ պաշտպանված տեսակը մարմնի ձևով, գունավորմամբ ընդօրինակում է պաշտպանված տեսակի հատկանիշները
5. Օվկիանոսի ջրերը, նավթը և հողը դասվում են հանքային նյութերի շարքին
6. Կենսարանական շրջապտույտի շարժիչ ուժերն են արեգակնային ճառագայթման էներգիան և կենդանի նյութի կենսագործունեությունը
7. Մակրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ

**53**

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Չրի մեջ սուզված գորտի մաշկը շնչառությանը չի մասնակցում, այդ դեպքում գորտը շնչում է միայն թոքերով
2. Ճկների մեզը միզածորաններով լցվում է միզապարկ և ապա հեռանում կոյանոցով
3. Երբ գորտի միզապարկը լցվում է, մեզն անցնում է կոյանոց և հեռանում օրգանիզմից
4. անքարենպաստ պայմաններում ինֆուզորիան բազմանում է սեռական եղանակով
5. օղակավոր որդերի արտաքրության համակարգը ներկայացված է մեկ զույգ խողովակներով, որոնք դեպի դուրս բացվում են արտաքրության անցքերով
6. սողունների ծվի մեջ, սաղմի շուրջը սաղմնային թաղանթներ չեն առաջանում
7. մողեսի ողնաշարը կազմված է չորս բաժիններից՝ պարանոցային, կրծքային, գոտկային, պոչային

**54**

**Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.**

1. որքան մեծ է ձայնալարերի տատանման հաճախականությունն, այնքան ցածր է ձայնը
2. ենթաստամոքսային գեղձը կազմված է գլխիկից, վզիկից և փայծաղին հարող պոչից
3. արյան հոսքի արագությունը մազանոքներում մոտ 100 անգամ փոքր է, քանի առոտայում և կազմում է 0.5մ/վրկ
4. լեղու գույնը պայմանավորված է բիլիուրինով
5. օրվա ընթացքում երկու մեծ ավշային ծորաններով արյուն է վերադառնում 2-3 ավիշ
6. թրոմբոցիտները և լեյկոցիտները չափսերով էրիթրոցիտներից փոքր են
7. հիմային թաղանթի վրա գտնվում են լսողական ընկալիչները

**55**

**Նշել բոլոր ճիշտ պնդումները.**

1. միտոզի պրոֆազից մինչև ինտերֆազի G<sub>2</sub> փուլն ընկած ժամանակահատվածը քրոմոտոմները կազմված են լինում մեկ քրոմատիդից
2. միտոքոնոպրիումները և քլորոպլաստները բազմանում են կիսման միջոցով, դրանց բնորոշ են մեյոզը, տրամախաչումը
3. բույսերում առանց բեղմնավորման սաղմի և սերմի զարգացումը կոչվում է ապոմիքսիս
4. մարդկանց օվոգենեզը սկսվում է օրգանիզմի սաղմնային զարգացման ընթացքում
5. բողբոջմամբ բազմանում են խմորասնկերը, հիդրաները, հիդրոիդ և կորալյան պոլիաները
6. գերդոմինանտության դեպքում հոմոզիգոտ վիճակում դոմինանտ ալելով պայմանավորված հատկանիշն ավելի ցայտում է դրսնորվում, քանի հետերոզիգոտ վիճակում

**56**

**Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. ջրի հետ փոխազդեցության արդյունքում ԱԵՖ-ի ածխաջրի և ֆոսֆորական թթվի միջև առկա կապը ճեղքվում է, և ԱԵՖ-ը ձևափոխվում է ԱԿՖ-ի
2. միոզինը և ակտինը շարժողական ֆունկցիա կատարող սպիտակուցներ են, որոնք կազմավորում են մկանաթելիկներ և միմյանց հետ փոխազդելով, մեկը մյուսի նկատմամբ սահելով՝ ապահովում են մկանների կծկումը
3. քրոմատինը ԴՆԹ-ի ու հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների համալիր է
4. բույսերի կանաչ գույնը պայմանավորված է նրանով, որ քլորոֆիլը հիմնականում կլանում է կանաչ լույսը և անդրադարձնում կարմիր և կապտամանուշակագույն լույսը
5. շրջակա միջավայրում կալիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի քիչներում, իսկ նատրիումի իոնների պարունակությունը կենդանի քիչներում է ավելին, քան շրջակա միջավայրում
6. քջում ջուրը թթվածնի և ջրածնի աղբյուր է

**57**

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- միջատները շնչում են օդատար խողովակներով՝ մալպիգյան անոթներով
- միջատների նյարդային համակարգը հանգուցավոր է, կազմված է վերկանային և ենթակլանային նյարդային հանգույցներից և փորի նյարդային շղթայից
- լվերը, փայտոցիլները ունեն ծակող-ծծող բերանային ապարատ
- ճանձները, մեղուները բացի բարդ աչքերից, ունեն նաև պարզ աչքեր
- կաթնասունների սրտի ձախ փորոքից դուրս է գալիս առրտայի աջ աղեղը
- բաղակուոցի մարմինը պատված է խիտ մազածածկույթով, ականջախեցի չունի
- թռչունների էգերի ձախ ձվարանը և ձվատարը զարգացած չեն, ինչը թերևացնում է թռչունների մարմինը

**58**

## Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

- արտաքին միջկողային մկանները մասմակցում են ներշնչմանը
- թոքերը պատված են հարթ մկանային հյուսվածքի միաշերտ բաղանթով, որը նպաստում է թոքերի կծկմանը և ընդարձակմանը
- կոնքոսկրերը կիսաշարժուն միացած են սրբոսկրին
- նեֆրոնի պատիճի պատի երկու շերտերի միջև գտնվում է մազանոթների (մալպիգյան) կծիկը
- բազկի երկգլուխ և եռագլուխ մկանները հակազդիչներ են
- տափակ ոսկրերի բվին են դասվում գանգի, կոնքի ոսկրերը
- մկանները ոսկրերին միացնող ջլերը շատ ամուր են և ապահովում են կիսաշարժուն միացումը շրջոսկրի (վերնոսկրի) հետ

**59**

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- միևնույն ծնողների երեխաների գենոտիպային և ֆենոտիպային բազմազանությունն իիմնականում համակցական փոփոխականության արդյունք է
- հիբրիդների առաջին սերնդի միակերպության օրենքն այլ կերպ անվանում են դոմինանտման օրենք
- կատունների մարմնի գունավորումը X քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ է, և խայտարդետ լինում են միայն արու կատունները
- մեկ քրոմոսոմում գտնվող գենների խումբը կոչվում է շղթայակցման խումբ
- ինվերսիան ոչ հոմոլոգ քրոմոսոմների միջև հատվածների փոխանակումն է
- ասիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում երկու քրոմոսոմների ցենտրոմեր չափառակող հատվածները միանում են իրար
- ըստ Մորգանի օրենքի մեկ քրոմոսոմում գտնվող գենները մեյոզի արդյունքում ընկնում են մեկ գամետի մեջ, այսինքն շղթայակցված են ժառանգվում

**60**

Խաչասերել են AaBbCcDdEeFf x AaBbCcDDEeFF գենոտիպերով առանձնյակներին: Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին երեքում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում: Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը:

- (61-62) Էկոհամակարգ մտնող էներգիայի միակ աղբյուրն Արեգակնային լույսն է, որի գումարային էներգիան մեկ տարվա ընթացքում կազմում է  $6,4 \cdot 10^8$  կՋ: Ֆոտոսինթեզի օգտակար գործողության գործակիցը հավասար է 1,2%: Էկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝ բույսեր - բուսակեր կենդանիներ - գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ:

**61**

Չանի<sup>o</sup> մակարույժ կարող է սնվել տվյալ համակեցության գիշատիչների հաշվին, եթե մեկ մակարույժի զանգվածը 1 գ է, իսկ մակարույժների 1 կգ գումարային զանգվածում պարունակում է  $4 \cdot 10^4$  կՋ էներգիա: Ընդունել, որ յուրաքանչյուր մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 10%-ը:

**62**

Որոշել էներգիայի կորուստը (կՋ) սննան շղթայի գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ օղակում:

(63-64) Բակտերիայի զանգվածը  $8,016 \cdot 10^{-12}$  գ է: Սպիտակուցները կազմում են քջի զանգվածի 22%-ը:

**63**

Որքա՞ն սպիտակուցի մոլեկուլներ կան բակտերիայում, եթե դրանց միջին մոլեկուլային զանգվածը  $50000$  դալտոն է: Հաշվի առնել, որ  $1$  դալտոնը  $1,67 \cdot 10^{-24}$  գ է: Պատոսիսանը բաժանել  $1000$ -ի:

**64**

Զանի<sup>9</sup> հազար դալտոն է բակտերիայի սպիտակուցը կողավորող գենի զանգվածը: Ընդունել, որ մեկ նուկլեոտիդի միջին մոլեկուլային զանգվածը  $300$  դալտոն է, իսկ մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը՝  $100$  դալտոն:

**65**

16-ժամյա լուսային օրվա պայմաններում  $80 \text{ m}^2$  տերևային մակերևույթ ունեցող ծառի կողմից 30 օրում քանի<sup>9</sup> լիտր թթվածին է արտադրվել, եթե 1 մոլ զազը գրադեցնում է 22,4 լիտր ծավալ:

- (66-67) Ծագանակագույն աչքերը և կարճատեսությունը պայմանավորող գեները դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքեր և բնականոն տեսողություն որոշող գեների նկատմամբ և ժառանգվում են որպես առաջնային չշղթայակցված հատկանիշներ: Ծագանակագույն աչքերով և կարճատես տղամարդին ամուսնանում է երկնագույն աչքերով և բնականոն տեսողությամբ կնոջ հետ: Նրանց առաջին երեխան երկնագույն աչքերով էր և բնականոն տեսողությամբ:

**66**

Գտնել այդ ընտանիքում երկնագույն աչքերով երեխա ծնվելու հավանականությունը (արտահայտված տոկոսներով):

**67**

Գտնել այդ ընտանիքում երկնագույն աչքերով, բնականոն տեսողությամբ երեխա ծնվելու հավանականությունը (արտահայտված տոկոսներով):

Մարդն օրվա ընթացքում քնում է 8 ժամ, 5 ժամ կատարում է ծանր ֆիզիկական աշխատանք և աշխատանքի ժամանակ 1 րոպեում կատարվող շնչառական շարժումների թիվը և շնչառական օդի ծավալն աճում են 2 անգամ, իսկ օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալը՝ 25% - ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 17 շնչառական շարժում, շնչառական օդի ծավալը 600 մլ է: Քանի<sup>o</sup> անգամ է օրգանիզմում արթուն վիճակում մեկ օրվա ընթացքում յուրացված քրվածնի ծավալը գերազանցում քնած վիճակում յուրացված քրվածնի ծավալը: Պատասխանը բազմապատկել 1000-ով:

**69**

Մարդու տեսողական վերլուծիչի կառուցվածքին կամ նրանում իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ցույփիկները գույները չեն տարբերում, օժտված են բարձր լուսագգայնությամբ
2. ձեռքբերովի կարճատեսությունը պայմանավորված է կյանքի ընթացքում ակնաբյուրեղի կորության մեծացումով
3. ակնաբյուրեղը երկգոգավոր ոսպնյակ է, որով անցնելու ժամանակ լույսի ճառագայթները բեկվում են
4. դեղին բիծն ընկալում է բիջ դիմաց գտնվող առարկաների հատակ պատկերները
5. մարդու աչքի բիբը եղջերաբաղանքի կենտրոնում գտնվող անցք է
6. ծիածանաբաղանքի հարևանությամբ գտնվում է թարթիչավոր մարմինը, որի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորությունը

**70**

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ԴՆԹ-ի կազմում հանդիպող պուրինային ազոտական հիմքերն են ցիտոզինը և ցուանինը
2. գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նուկլեոտիդների մեկ եռյակը կարող է կոդավորել 1- 6 ամինաթթուների
3. ԴՆԹ-ի կազմում հանդիպող պուրինային ազոտական հիմքերն ունեն միզարբվի նման կառուցվածք
4. ԴՆԹ-ի մեկ շղթայում նուկլեոտիդները միմյանց միանում են մեկ նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի և մյուսի ածխաջրային մնացորդի միջև առաջացող կովալենտ կապով
5. ըստ Զ. Ութստնի և Ֆ. Կրիկի առաջարկած մոդելի, ԴՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդներից կազմված երկու շղթաներն իրար միանում են Ց և Գ հիմքերով նուկլեոտիդների միջև առաջացող 2, ու Ա և Թ հիմքերով նուկլեոտիդների միջև առաջացող 3 ջրածնային կապերի միջոցով
6. եթե ԴՆԹ-ի մոլեկուլում թիմինային նուկլեոտիդների քանակը նուկլեոտիդների ընդհանուր թվի 20 %-ն է, ապա ԴՆԹ-ի այդ մոլեկուլում ցիտոզինային նուկլեոտիդները կկազմեն նուկլեոտիդների ընդհանուր թվի 40 %-ը